

յատուկ եռանդեանիդ հետ, գովելի գիտաւորութիւն մը պահելու եւ հետազօտելու զճշմարտութիւնն ի Ս. Գրոց ի վկայութեանց Հայոց, որ աղբիւրներէն, եթէ անապական են, ստուգիւ կրնայ մեծապէս լուսաւորուիլ այն: Անոր համար հաճոյական եղաւ Մեզի Քու բարի մտաց այդ անսովոր նշանը. եւ որովհետեւ ստոյգ գիտենք՝ թէ Դուն ուր կը գտնուիս եւ որպիսի պատիւ կը վայելես հայ հռչակաւոր ազգին քով, բորբոքեցաւ մեր սիրտն ըղձիւ վաստրկելու Քու անձդ, հանդերձ յուսով, որ Դուն, հետազօտելով նախ ճշմարտութիւնը, մասնակից պիտի ըլլաս Մեր խնամոց քուկիներդ յաւիտենական փրկութեան հասցընելու, եւ հոգ պիտի տանիս առաջնորդելու Քեզի հետեւող ոչխարները Քրիստոսի փարախն, այն ապահով ճամբու վրայէն, որմէ զարտուողը բոլորովին կը մոլորի. որպէս զի անոնք Քեզի հետ ճշմարիտ հաւատոյ ձեռօք աստուածային շնորհքի, եւ ասով ալ երկնից յաւիտենական փառաց հասնին:

Նաեւ Մեզի ուրախալի եղաւ Քու նամակէդ իմանալն, որ Ս. Պետրոսի Առաքելոց Իշխանին այս ծայրագոյն Աթոռը կը յարգես, ըստ օրինակի նախնի Ամենապայծառ Քահանայապետի՝ Աստուածապատիւ Գրիգորի Լուսաւորչին, որուն սակայն, եթէ ճշմարտապէս նմանիլ կ'ուզես, ինչպէս որ կը հաւատանք թէ Դուն կը բաղձաս, պարտուպատշաճ է, որ այն կաթուղիէ հաւատքն ընդգրկես, զոր ունի Սուրբ Հռոմէական Եկեղեցի, բովանդակ աշխարհի